# “ԱՐՄԵՆԻԱ” ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ” ՓԲԸ

**Հաստիքի անվանումը՝** Ավիացիոն անվտանգության Մուտքերի և օբյեկտների պահպանության տեսուչ

**Աշխատանքային պայմանները՝** հերթափոխով, որոշակի ժամկետով (2 ամիս փորձաշրջան)
**Աշխատավայրը՝** Զվարթնոց օդանավակայան
**Սոցիալական երաշխիքներ՝** անվճար ծառայողական տրանսպորտ,
**Աշխատանքի նկարագիրը՝** իրականացնել մուտքերի և օբյեկտների վերահսկողության, անցագրային և ներօբյեկտային վերահսկողություն:

**Հիմնական գործառույթները և պարտականությունները**

- Ուսումնասիրել և գործել քաղաքացիական ավիացիայի անվտանգության պահպանության և ապահովմանն առնչվող փաստաթղթերին, օրենսդրական և նորմատիվային ակտերի համաձայն,
- Գիտենալ յուրաքանչյուր պահպանվող օբյեկտի առանձնահատկությունները, պահպանության ընդհանուր և հատուկ պահանջները,
- Սահմանափակել օդանավակայանի վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներ կողմնակի անձանց, ավտոտրանսպորտի մուտքը /ելքը/,
- Վերահսկել օդանավակայանի վերահսկելի գոտիներ աշխատողների և ուղևորների մուտքը,
- Իրականացնել անցագրային և ներօբյեկտային վերահսկողություն,
- Գիտենալ գործող բոլոր անցագրերի ձևերը,
- Հսկողություն իրականացնել օդանավակայանի համալիրից դեպի օդանավ և օդանավից դեպի օդանավակայանային համալիր ուղեբեռի ու բեռների փոխադրման աշխատանքների նկատմամբ,
- Կանխել նյութական արժեքների հափշտակումը,
- Կազմակերպել և իրականացնել ավիացիոն անվտանգության ապահովմանը առնչվող հիմնախնդիրների և կանոնակարգերի կատարումը,
- Արտակարգ իրավիճակների կամ ռազմական դրության ժամանակ իրականացնել հասարակական կարգի և անվտանգության ապահովման համապատասխան և անհրաժեշտ բոլոր միջոցառումները,
- Պահանջել օդանավակայանի անցագիր կրող բոլոր աշխատակիցներից կատարելու ավիացիոն անվտանգության սահմանված բոլոր կանոնները և հրահանգները,
- Կանխել իրեն հանձնարարված տեղամասում հնարավոր բացասական երևույթները,
- Զեկուցել հերթափոխի վերահսկիչի տեղակալին, հերթափոխի վերահսկիչին, ղեկավարի տեղակալին և ղեկավարին կազմակերպվող և իրականացվող աշխատանքների ընթացքի, դժվարությունների, ավիացիոն անվտանգությանը առնչվող ուղղակի կամ անուղղակի խնդիրների, առաջադրանքների, խոչընդոտների հաղթահարման մասին, առաջարկներ անել թռիչքների անվտանգության ապահովման համակարգի կատարելագործման ուղղությամբ:

**Ներկայացվող պահանջները.**

- Բարձրագույն կրթություն,
- Պարտադիր զինվորական ծառայություն,
- Հաղորդակցման հմտություններ,
- Հաճախորդների հետ աշխատելու ունակություն,
- Օտար լեզուների իմացությունը ցանկալի է,
- Լարված պայմաններում աշխատելու ունակություն,

**Դիմելու կարգը**՝ Բոլոր հետաքրքրված թեկնածուները, ովքեր համապատասխանում են վերոնշյալ հաստիքի պահանջներին, կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականը hrselection@aia-zvartnots.aero էլ. հասցեին “subject” դաշտում պարտադիր նշելով **“Մուտքերի և օբյեկտների պահպանության տեսուչ”:**